

2319

ՄԿՐՏԻՉ ՍԻՄՈՆԵԱՆ ԲՈՂԴԱՌԱՐԵԱՆՑ

ՆԵՐԿԱՄՔԱՐ ՄԻՔԶԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՄԱՆԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ

ՊԱՏՄԻԱԾՔ

Թէպէտ իմ Թիֆլիդ գալուս ուրախացայ
Բայց իմ սիրելի եղներին մոռնալ չը կարողացայ.

Մ. Ա. Բ.

891.995
F - 24

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Էլեքտրասակ. Օր. Ն. Ազանեանի Պոլից. 7

1913

391-99 B
F-24

Կ

294930 MAY 2011

ՄԿՐՏԻՉ ՍԻՄՈՆԵԱՆ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՅ

ՆԵՐԿԱՐԱՐ ՄԻՐԶՈՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՄԱՆԿԱՆ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ

ՊԱՏՄԻԱԾՔ

Թէպէտ իմ Թիֆլիս գալուս ուրախացայ
Բայց իմ սիրելի եղներին մոռնալ չը կարողացայ.
Մ. Ա. Յ.



Թ Ի Ֆ Լ Ի Զ
Էջմբառապ. Օր. Ն. Աղանեանի Պոլից. 7
1913

ՆԵՐԿԱՐԱՐ ՄԻՐԶՈՆ

Ա. Գևորգի

Դեռ 12 տարեկան մի վտիտ ու աշխոյժ երեխայ էի ես, որ հայրս ինձ իր հետ ցանկանում էր Ռուսաստան բերել: Մօտ էր այն օրը, որ հայրս Թիֆլիզ պիտի գնար, իհարկէ ես չ'զիտէի այդ և առաւտները ըստ սովորականին կանուխ վեր էի կենում, կովերն ու եղները առաջս անում, շվշագնելով դէպի հանդ բարձրանում, արածացնում ու գիշերները կրկին տուն էի վերադառնում: Ես այդ պահում լինում էի այնպէս յոզնած ու ջարդւած, որ նստել անգամ չէի ցանկանում: Տուն գալուն պէս անսմիջապէս «թանով սպաս» էի պահանջում, որ մայրս իսկոյն լցնում էր մի մեծ ամանի մէջ ու բերում առաջս դնում: Ես ագահաբար վրայ էի ընկնում, մեծ ախորժակով ուտում և ապա միայն պարկում էի քնում:

Այսպէս, այս կեանքը շարունակւում էր երկար, ես ամենայն օր նոյն իմ սիրելի եղներըն ու կովերն առաջս արած տանում էի դաշտ, կուշտ արածացնում, ու երեկոները նորից վերադառնում, իմ սիրած «թանէ սպաս»-ը պահանջում:

Մի անգամ էլ երբ յօգնած վերադարձայ տուն և պահանջեցի իմ սիրած կերակուրը—ուշացաւ. թէ ինչու, անհասկանալի մնաց ինձ: Գուցէ մայրիկս տանը չէ—մտածեցի ես ու կանչեցի քրոջս Մարթային—Մարթա, Մարթա...



11673-57

—Համմէ—կանչեց քոյրս:

—Համմէն գլխովդ կպչի—առացի ևս վրդոված—
ուրէ մայրիկը, ինչու թանով չէք բերում, չէ որ քաղ-
ցած եմ ու յօդնած մինչև երբ սպասեմ և բացի դորա-
նից չէ որ քնել եմ ուզում:

—Մայրիկը տանը չէ, զնաց մեծ մամոնց տունը
—ասաց ու սկսեց հեկեկալ:

—Ինչ է պատահել Մարթա—մօտեցայ ևս քրոջո
—ինչու ես լաց լինում:

—Մա... մայ... բիկը ա... սաց, որ հայրիկը եր-
կուշարթի կրկին Թիֆլիզ է գնալու:

—Յիմար—ասացի ևս—էլ ինչու ես լաց լինում
կը գնայ, կրկին կը վերադառնայ ու մեզ համար նոր
գլխարկ ու կօշիկներ կը բերի, ուրախացիր, տիրելու
ինչ կայ:

Զնայելով, որ իմ ուրախութեանս չափ ու սահման
չկար, բայց և այնպէս քոյրս անդադար լալիս էր, մին-
չև որ մեծ մամոնց տանից մայրիկը հկաւ, բարկացաւ
Մարթայի վրայ, վերջն էլ տեսնելով, որ ձայնը չի կը-
տրում, մի լաւ էլ քօթակեց, որ միւս անդամ հօրս
Թիֆլիզ գնալու ժամանակ չ' համարձակւի լաց ընել
ու, հրամայեց անմիջապէս թոնիրը վառել, որովհետեւ
հունցած իմորը քացախում էր և հօրս ճանապարհի
պաշար էր հարկաւոր. իսկ ինքը կապելով սպիտակ
երկար գոգնոցը, նստեց տաշտի առաջ, ու սկսեց խը-
մորը կտրտել, որ գաթայ թիփ:

Հօրս Թիֆլիզ գալու լուրը իմ թանով սպասս մո-
ռացնել տւեց: Մայրս արդէն վերջացրել էր խմորը:
Նա նախ կտրտեց, ապա կտորները ձեռքով կլորեց ու
ամեն մէկը կարծես մի-մի գնդակ շինեց, շարեց փայ-
տեայ մեծ մատուցարանում (խոնչայում) տարաւ թը-
խելու և պատւիրեց ինձ չքնել:

—Ի՞նչպէս չքնիմ մայրիկ, չէ որ շուտով կը լու-
սանայ, ես եղները տանելու եմ հանդը արածացնելու:

—Ոչ ջանիկս, հայրիկդ ասաց, որ այլս դու հանդ
չիս գնալու դու այս երկու երեք օրը հանգստանալու
ես, որովհետեւ նա քեզ իւր հետ Թիֆլիզ է ասնելու:

Ո՛հ որքան ուրախացայ, ի՞նչ մտքեր ասես, որ այդ
ըովէին չանցաւ իմ գլխով. ես մտածում էի,—ի՞նչ լաւ
եղաւ, կը գնամ Թիֆլիզ, փող կաշխատեմ ու իմ սե-
փական աշխատանքով կօշիկենր ու գլխարկ կառնեմ
թէ ինձ համար թէ Մարթայի և թէ մայրիկի համար:
Բայց մինչոյն ժամանակ կարծես չի հաւատում մայ-
րիկիս ասածներին. վազեցի թոնիր մայրիկի մօտ ու
կրկին հարցրի թէ արդեօք ճիշտ ասաց, որ հայրիկը
ինձ էլ է տանելու Թիֆլիզ:

—Հա ջանիկս—ասաց մայրս— Դէն, տեսնեմ բալաս
մայրիկիդ համար ի՞նչ պիտի ուղարկիս Թիֆլիզից,
ինչպիսի տղայ ես գառնալու մեզ համար:

Թէ ի՞նչ ուրախ էի ես, թէ ինչպէս կանգնած տե-
ղը պարում էի, այդ կը հասկանայ միայն նա, ով
տարիներ գիւղում ապրելով լսել է քաղաքի սքանչե-
րիքների մասին, երազել է տեսնել՝ միայն բախտ չի ու-
նեցել: Ես գուրս թուայ անմիջապէս փողոց, վազգելով
անցայ գիւղական անմաքուր փողոցներով և անմիջա-
պէս պատմեցի իմ ընկերներիս, որ ես զարիբութեան
եմ գիմում: Զմոռանամ ասել, որ այդ վազգելու ժա-
մանակ մի լաւ էլ զրխացի և քիթս արնեցի, սակայն
դա չէր կարող արամազբութեանս վրայ մաղաչափ իսկ
աղդել: Երբ վերադարձայ, մայրս արդէն զաթան թը-
խել վերջացրել էր ու փոկ սփոսցի վրայ, որ լաւ չո-
րանայ: որպէսզի ճանապարհին չը փչանայ:

Իսկ այդ ժամանակ մեր գիւղի աղստիկալները
(ծերունիները) բազմած սփոսցի չորս կողմը, գիւղական

սրահում զբուցում էին և թէյ խմում։ Վերջապէս աճցաւ այդ ուրախալի օրերը և ճանապարհելու ժամը մօտ էր արդէն։ Դեռ լուսաբացը չ'կար, որ վեր կացանք անկողնից։ Մայրս արդէն թէյ էր պարզաստել։ Մենք բոլոր ազգականներով թէյ խմեցինք միասին ու վերջին համբոյրներս տալով Մարթային, մայրիկին և ազգականներիս գուրս եկանք գիւղից, թողնելով հոսող արցունքներ մեր յետելից։

Հայրս առաջ անցաւ. ես հետեւեցի նրան։ Հաղիւ մի քանի քայլ էինք անցել, որ հայրս կանգ առաւ, ապա վստահ քայլերով մտաւ եկեղեցու բազը։

— Արի այստեղ որդի, չոքիր ինձ հետ, աղօթիր, որ Աստւած քեզ շնորհք ու առողջութիւն տայ մուրազիդ հասնելու։ Ու Հայրս ձեռքերը երկինք բարձրացրած աղօթքներ էր մրմնջում։ «Ով տէր Աստւած, ով սուրբ եկեղեցի մեզ անփորձ պահիր, թշնամու սրատվ մի անիր, ոու մեր գործին յաջողութիւն տուր»... ասաց նա ու խաչակներով վերջին անգամ, մենք ճանապարհւեցինք։

Ճանապարհին մենք միացանք մեր համագիւղացիներին, որ նոյնպէս Թիֆլիզ էին գնում և մենք միասին ուղևորեցինք։

Արեգակն սկսեց իր ոսկեճաճանչ փայլով գուրս գալ հեռու սարերի ետելից ու իր կենսատու ճառագայթները սփռել լեռների ստորոտներում։ Թուչունները սկսեցին իրանց սովորական քաղցրահնչիւն մեղեղիները դայլայլել ազատ բնութեան գրկում։ Խսկ քչքչան առուները, ծաղկափթիթ ծառերը, սփռած ցնձաղիկն ու մանիշակի հոտաւէտ բուրմունքով, կարծես մի դրախտ էր ներկայանում մարդու առաջ։ Մենք արդէն մօտեցել էինք հայաբնակ Ղալաղ գիւղին, ու մենք լսում էինք առաւ լոտեան ժամերգութեան զանգերի դողանջիւնը, որ կար-

ծես սովորականից աւելի վաղ լինէր. իսկ գիւղի տղաները նախիրը առաջներն արած տանում էի արածացնելու. Օխ որքան հրաշալի թւաց ինձ այդ առաւօար, եղների բառաչը, տաւարների ուրախ բացականչութիւններն ու կատակները յեշեցրեց իմ երկու օր առաջ գրութիւնը և ինձ թւում էր թէ ընդմիշտ եմ զրկուում ես գիւղական այդ հրաշալի կեանքից, այդ աննման դը բախտից, այդ հմայիչ ստեղծագործութիւնից։ Ու մենք հեռացանք Ղալաղ գիւղից, և շարունակելով մեր ճանապարհը՝ երրորդ օրը հասանք Ռուսական Զուլֆա։ Թէպէտ ես իմ Թիֆլիզ գալուս ուրախացայ, բայց իմ սիրելի եղներին մօռանալ չը կարողացայ։

Բ. ԳԼՈՒԽ

Զուլֆայից սայլապանը մեղ բերեց մինչև Նախիջևան, իսկ այստեղից մարդատար գնացքով եկանք Թիֆլիզ։ Երկրորդ օրը հայրս ինձ ամբողջ քաղաքը պտտացրեց։ Ես զարմանում էի քաղաքում, ինձ համար եղած նորութիւնների վրայ, երբեմն կանգ էի առնում այս ցուցանակի այն ցուցանակի հանդէպ, դիտում պատուհաններում շարւած գեղեցիկ իրերը, փողոցով անցնող կառքերը, աւտոմոբիւնները զարդարւած ժողովրդին, որ շտապ շտապ անցնում էին։ Նրանք բոլորն էլ զուքրւած զարդարւած էին կարծես հարսանիքի լինէին հրաւիրւած։ Երկար փողոցում շրջելուց յետոյ տուն վերադառնաք։ Մի փոքր հանգստանալուց յետոյ, հանեց գրպանից մի ինչ որ բանալի և իջաւ տան ներքնայարկում եղող խոնաւ ու մութ սեննեակը. հայրս հանեց գրպանից լուծկին, վառեց այնտեղ եղող փոքրիկ լամպան, գրեց պատուհանի վրայ, մօտեցաւ այնտեղ թափթիւած ինչոր իրերի ու կանչեց ինձ մօտը։

— Որդի, բալաս Միրզոյ, եկ այստեղ, գուցէ վաղը

Աստուած մեզ յաջողեց և մենք գործ վերցրինք կապալով, չէ որ դու էլ պէտքէ օդնես. ես արդէն ծերացել եմ, որդի տարիքս եկել անցել է, վաղը կամ միւս օրը վեր կընզնիմ կը մեռնիմ տան ամբողջ խնամքը, նըրանց կերակրելու պահելու պահապանելու խնամքը դու պիտի քաշես, բայց որպէսզի դու իմ մեռնելուց յետոյ չը մնաս շւարած թէ ի՞նչ անեմ. ի՞նչ գործի կենամ, որ մի կտոր հաց գտնեմ. ես քեզ կը սովորեցնեմ իմ արհեստը, որ նա յաւիտեան հաց տայ քեզ, որ դու իմ մեռնելուց յետոյ օտարի մոռնաթին չ'մնաս: Որդի, ամեն մի մարդ կամ պատանի երբ մի արհեստ է սովորում նախ պէտքէ այդ արհեսդի մէջ գործադրելիք գործիքների անուններն իմանայ և ապա արհեստը սովորի:

Ու նա սկսեց մէկիկ-մէկիկ գործիքների անունները տալ ու ստիպել, որ ես էլ միշտ կրկնեմ, որ բոլորովին տպաւորի իմ մէջ:

— Սա շակիլի է, սա վերո է, սա կիստ է, սա մխաւոյ է, սա էլ սանդուխքն է, որդի:

Ես կրկնում էի թէ բարձր և թէ մտքիս մէջ, մինչ և որ բոլորի անունները կանոնաւոր սովորեցի և գուրս եկանք այդ մութ ու խոնաւ սենեակից ու բարձրացանք մեր բնակարանը և պարկեցինք քնելու: Հայրս լուս էր. ես նմանապէս, միայն իմ միտքը անդադար գործում էր. ես մտքիս մէջ կրկնում էի գործիքների անունները, և նրանց մտապատկերները վերյիշում անկողնում:

Առաւետեան երբ զարթիցինք, հայրս վերցրեց ինձ և մենք վաղ առաւետեան փողոց իջանք: Մեզ նըման արհեստաւորների ահազին խմբեր հաւաքւել էին այդ հրապարակի երկու կողմերում և սպասում էին մեզ պէս գործատիրոջ, որ իրենց ծառայութիւնը մատուցանեն: Հայրս հանգիստ չէր. նա շարունակ ցոյց

էր տալիս ինձ, թէ ինչպէս պէտքէ ներկել դռները, լուսամուտները, թէ ինչպէս պէտքէ վերաբերւել դէպի գործատէր աղան, ինչպէս պէտքէ վարւել նրա հետ, պէտքէ միշտ խոնարհ, հեղ լինել, աղաչել, պաղատել, խնդրել խեղճ երկալ նրա աշքին, որ գոնէ երբեմն խընայի և խեղճ ու մինումար արհեստաւորի բերանի թիքէն չ'խիլ. ու այսպէս երկար քարոզներ կարդալով անցաւ մեր ամբողջ օրը և մենք երեկոյեան նորից առանց գործի դատարկածեռն տուն վերադարձանք:

Այսպէս մի քանի օր հայրս անգործ շրջելուց յետոյ, վերջապէս յաջողւեց նրան Սոլոյակ կոչւած թաղում գործ վերցնել: Երեկոյեան երբ նա վերադարձաւ տուն պատւիրեց, որ առաւետը վաղ վեր կենամ, գիւղեց բերած հին շորերը հագնիմ, որ վաղւանից բանելու (աշխատելու) եմ զնալու: Թէպէտ այնքան էլ ուրախ չէի գործի գնալու համար, սակայն ի՞նչ կարող էի անել: Երեկոյեան անկողնում նորից մտածմունքների մէջ ընկայ: Ես յիշեցի մեր սիրուն եղները, հանդ ու արօտները, կարկաչիւն սառնօրեակ աղբիւրները, գիւղի իմ ընկերներին, նորից մտքով քաղաք վերադարձայ, յիշեցի փողոցով անցնող ուսումնարան զնացող տղայ-աղջիկներին: Ես կարդալ էի ուզում և ոչ թէ արհեստ. գիր սովորելու յոյսով էի, որ ես Թիֆլիզ էի եկել և իմ յոյսերս խորտակւած էի տեսնում. սակայն լուս էի անձայն. հօրս կամքն էր և ես հնարաւորութիւն չունէի բողոքել:

Լուսացաւ: Առաւետը մենք արդէն գործի վրայ էինք: Աշխադում էի, բայց վայ այն աշխատելուն, իմ միտքս ուրիշ տեղ էր և ես շարունակ հարցնում էի հօրս երբ և է ես էլ կը կարդամ հայրիկ: Նա ինձ գըրխով էր անում և նորից կարգադրում որ գործիս արի լինեմ: Ես նորից աղաչում էի պաղատում, բայց ոչինչ

Հեր լինում. իզուր էր անցնում իմ ամեն օրեայ աղա-
չաքն ու պաղատանքը, լացն ու կոծը:

Իսկ ընաւ գործել չէի կարողանում, երբ տեսնում
էի աշակերտները գնում են ուսումնարան, ամեն մէկը
մի-մի պայուսակ ձեռներին։ Նախանձիցս սկսում էի
լաց լինել այնքան, որ գլուխս սկսում էր ցաւել, ոտ-
ներս գողալ, ամբողջ մարմինս թուլանում էր ու ընկ-
նում էի սենեակի մի որեէ անկիւնում ու մտածում
թէ արդեօք մի բարեխիղճ, մի Աստածասէր մարդ չը-
պիտի գուռը բաց անի չը պիտի հարցնի թէ ինչո՞ւ եմ
լալիս թէ ինչո՞ւ եմ արցունքի ծով շինում։ Իսկ ես փո-
խանակ պատասխաներու՝ ծիծաղէի նրա երեսին
խելքից ցնորւածի պէս ու իմ բերկրանքը յայտնէի։
Եւ համոզւած էի, որ այն բոլոր կարգացողներն էլ ինձ
պէս աղքադ են եղել, լացել են արցունք են թափել և
հասել են իրանց նպատակին։

Զբաղւած այդ քաղցը ու խենթային երազներով,
յանկարծ մէկը մի սարսափելի ապտակ հասցրեց երե-
սիս ու չբաւականանալով ուժեղ ապտակի հարւածից,
սկսեց ոտների ուժեղ հարւածներով ողջ մարմինս ջարտ
ու փշուր անել ու զայրացած բղառել «Ո՞ւր է, ի՞նչ
ես շինել առաւօտանից մինչև այժմ, որ հանգիստ նըս-
տել ես այդտեղ ու դեռ չես ամաչում լաց էլ ես լինում։
ինչ կայ լալու, ձէնդ կտրելու ես թէ ոչ»... Դա հայրտ
էր, որ սաստիկ ծեծելուց յետոյ կանչեց իր բոլոր բան-
տորներին ու ասաց։ լաւ լսեցէք Մուշեղ, Սուրեն, Քա-
լաշ, լաւ լսեցէք ասում եմ, եթէ երկրորդ անգամ էս
շան լակոտին մի որևէ բանի վրայ նստած կամ լաց լի-
նելիս տեսնէք, էնքան տւէք, որ քիթ ու պոռւնդն արիւ-
նոտի. եթէ չէք կատարի իմ ասածները գուք ինքներդ
կարժանանաք նոյն պատժին։ Ու մի սարսափելի
հայեացք ձգելով մեզ վրայ գուրս գնաց սենեակից։

—Անգութներ—ասում էի ես մտքումս—չեն թող-
նում, որ մարդ գոնէ իր արցունքներով մխիթարյան։
Այո չ'աւ չբարեել, ընկերոջ հետ անգամ չ'խօսալ, լուս
կենալ ինչպէս լուս են քարերն ու սարերը։

Մի կերպ ինձ պահպանում էի մինչև գիշեր,
մինչև քնելու ժամանակը և ահա երբ հանգչում էր ճը-
րագը և բոլորը խոմիացնելով ընում էին, այդ մթութեան
մէջ մի ստւէր գալիս էր դէպի ինձ. նա մօտենում էր,
կանգնում գլխիս վերկը և կամացուկ փսփսում ական-
ջիս՝ «Դէն լաց, լաց, որքան կարող ես, լացը հանգը-
տացնում է մարդու հոգեկան անդորրութիւնը»...

Առաջ ես շատ էի վախենում այդ ստուէրից, կար-
ծում էի թէ նա եկել է ինձ ծեծելու իմ արտասուլքնե-
րիս արգելք լինելու։ Բայց իհարկէ երկար չ'տևեց իմ
վախս, ես ընդելացայ սովորեցի այդ խորհրդաւոր
ստւէրին ու այնուհետեւ ամենայն գիշեր, երբ մօտե-
նում էր նոյն ստւէրը, ես ինձ ուրախ էի զգում, կար-
ծում էի և զգում, որ նա Սուրենանդակն է բաղդի, որ
նա մարդկային հոգս միխիթարող բարի հոգին է, որ
ամենայն գիշեր, զերմանական ճշտապահութեամբ
գալիս է ինձ այց և «Լաց»-ի տրամադրում ինձ։ Այդ-
պիսի լացերից յետոյ սովորաբար վրայ էր հասնում
ընութեան ամենաերջանիկ, ամենաքաղցը բարիքը՝ քու-
նը և ես լսկնում էի երազների աշխարհը, գրքերը
ձեռքիս առնում գնում էի ուսումնարան և հէնց որ հաս-
նում էի ուսումնարանի գուանը, ձեռքս տանում էի. որ
բանամ ներս մտնեմ... յանկարծ լսում էի հօրմ ձայնը
վեր էի թռչում տեղիցս արագ-արագ հագնուում շորերս
ու հետեւում հօրս, մենք դարձեալ մեր սովորական աշ-
խատանքին էինք գնում։ Այդպէս իմ լացը մի ամբողջ
տարի տևեց, և ոչոք չիմացաւ, բացի իմ ընկեր իսոր-
հրդաւոր ստւէրը։

Անցաւ այդ ամառը, հայրս ուզում էր գիւղ գնալ ու ինձ հօրեղբօրս խնտմագարութեանը յանձնեց:

Թէ ի՞նչ անոելի օրեր ու դժոխային օրեր անցըի այդ ամբողջ ձմեռը այդ միայն ես և Աստուած զիտենք: Բաւական է ասել, որ մի կուշտ փորով հաց ուտել անգամ ինձ չէր յաջողւում: Մի կերպ միայն այդ օրերը քաշ էի տալիս մինչև հօրս վերադարձը: Ես անգործ էի փակւած սենեակում, ինչպէս ազատ բնութեան մէջ սաւառնող թռչունը փակւած վանդակում, իսկ եթէ երբեմն ինձ յաջողւում էր դուրս գալ փողոց, պատահում էի «ինձ թշնամի» գրքերով գլուխ գնացող մանուկներին, իմ հասակակիցներին, ու նորից արտասուքները խեղդում էին ինձ, ես թաշկինակով փակում էի երեսս ու տուն վերադառնում և անիծում այն օրին, որ ես թիֆլիզը տեսայ, ես իմ սիրուն ու նախշուն եղները թռղի, որ այս կեանքը հասկացայ:

Գ. ԳԼՈՒԽ

Մի օր մտքերիս խորն ընկած յիշեցի իմ ծեր պապիկի հէքեաթը, որ միշտ պատմում էր մեզ, ինչ էր այդ, որ իմ մտքից երբէք չէր անցնում: «Մի զիւզում մի խեղճ աղքատ ու անօգնական մարդ է լինում, այնքան աղքատ, որ օրւայ հացին անգամ կարօտ է լինում: Նա ունէր շատ զաւակներ: Զաւակները մանր էին և ինչքան աշխատում էր խեղճ մարդը՝ գարձեալ քաղցած են լինում. Մի օր այս մարդը մի քանի հաց է վերցնում ու ճանապարհ ընկնում թէ ուր, այդ մասին նա ոչ ոքի ոչինչ չէ ասում: Շատ է գնում թէ քիչ, մի սարի վրայ նկատում է մի շատ հին շէնք: Նրա ճանապարհն էլ իսկ այդտեղով էր անցնելու, մօտենում է այդ հին փուլ եկած շէնքին ու տեսնում, որ այդ

շէնքի դուանը նստած է մի ծեր ալեոր մարդ. — «Բարի յաջողում պապի» — ասում է ճանապարհորդը:

— Աստուածոյ բարին աղքատ թորոս... Ո՞ւր:

Թորոսը լսելով ծերունուց իր անունը, ապուշ էր կարել թէ որտեղից էնա իրեն ճանաչում:

— Որտեղից զիտես պապի, որ իմ անունս թորոս է — հարցրեց թորոսը երկիւղով:

Ծերունին պատասխանեց, որ ինքը սուրբ է և ամենը զիտէ ու աւելացրեց, որ ամենայն օր Աստուածու հետ խօսակցութիւն է ունենում ինքը:

Աղքատ թորոսը լսելով, որ այդ ծերունին սուրբ է և Աստուածու հետ էլ ամեն օր տեսնում է, ոտներն ընկաւ աղաչեց, պաղատեց, որ երբ մի անգամ էլ Աստուածու մօտ լինի հարցնի թորոսի մասին թէ ինչո՞ւ է նա այդքան աղքատ, թէ ինչո՞ւ է նա այդքան աշխատանքից յետոյ օրւայ հացին կարօտ:

Ծերունին պատասխանեց՝

Ոչինչ աղքատ թորոս, մի վհատվիր, Աստուած քո այդ նեղութիւնների փոխարէն այն կեանքումն լաւին կ'փոխարինչ:

Աղքատ թորոսը չ'համաձայնեց, ու նորից ծերունու ոտները ընկաւ աղաչեց որ երբ գնա Աստուածու մօտ, իւր կողմից խնդրի Աստուածուն, որ իրեն հարստութիւն տայ:

Որպէսզի հնարաւորութիւն ունենայ իր զաւակներին կառավարել, իսկ այն կեանքումն համաձայն է առանց բողոքի դժողք մտնել:

Աստուածախօս ծերունին գնաց Աստուածոյ մօտ, երկար կանգնեց գուանը:

Դարձաւ Աստուած դէպի ծերունին ու հարցրեց թէ ի՞նչ ես ուզում Մովսէս.

— Ինչ խօսեմ Տէր, ասաց ծերունին, — քեզ արդէն

յայտնի է թէ ինչու համար եմ եկել ես:

Այն, Մովսէս յայտնի է, զնա աղքատ Թորոսին ասա, որ տուն վերադառնալիս կը գտնէ իրան ուղած հարստութիւնը, միայն թէ դժոխքի փայ կը դառնայ:

Աստուածախօս ծերունին գնաց և պատմեց ամեն բան Թորոսին:

Աղքատ Թորոսը տուն վերադառնալիս, իսկապէս որ տեսնում է ճանապարհին մի ոչխարի հօտ արածում է դաշտում հազարից աւելի, առանց տէր ու տիրականի, քշում է տանում տուն: Դէս, իհարկէ, այդքան ոչխար պահել հօ չէր կարող, մեծ մասը ծախում է ու այդ փողով լաւ աներ շինում, արան-նըրան էլ տուկոսով փող տալիս ու ապրում է Թորոսը, որպէս թագաւոր:

Մի օր ուզեցի ես էլ Թորոսի օրինակին հետևել, հեռանալ քաղաքից, անբնակ վայրերում թափառել ու զիլ կանչել՝ «Էյ արեր, ձորեր, Էյ երկնքի ծլվան թոչուններ, հարաբ գուք տեղեկութիւն չունէք իմ կեանքից, իմ կորած քաղդից: Ու խօսում էի մերթ սարերի, ձորերի, ծառերի հետ, մերթ քամու և ես ինքս չգիտէի ինչ եմ պահանջում և ումնից եմ պահանջում: Բայց և այսպէս ես ձեռներս վերև բարձրացած, թափւող աշնանային դեղին տերեւներից կարծես, մաշւած ու տանջւած մոլորւած սրտիս դարմանն էի փնտրում: Ես նայում էի այդ ծառին և այդ թափւող տերեւներին ու մտածում էի մի ժամանակ սա կանաչ էր և իր հովանու տակ քնացնում էր շատերին, ինչպէս գթառատ մայրը երեխին երգեր ու նանիկներ ասելով քնացնում է անուշ, իսկ այժմ խեղճ ծառ, լեզու չունի, որ գէթ մի երկու խօսք ասի, աչքեր էլ չունի, որ մի կուշտ լայ, արցունք թափէ ինձ պէս, որ ահագին ցաւից բեռնացած սիրտը հանգստացնէ: Էհ, ինչ արած,

երեկի Աստուած է պատժել —մտածեցի ես,—գուցէ այս ծառը բացի իր հովանու տակ հանգստացնելուց մի այլ չար գործ էլ է արել:

—Հէյ զիտի փուչ աշխարհ, լաւութեան համար պատժել: Այն, այժմ միայն ես մոռացայ իմ կոկիծն ու լացը, իմ տարիների թախիծը: Ես այլես ինձ համար չէի մտածում, այլ միայն յուղւած այդ ծառի սոսկալի պատմութիւնից, յենւած մնացի իմ անկեզու բարեկամի թիկունքին:

Որքան կուզէի, որ այս իմ խեղճ, անկեզու բարեկամի մասին մի բան գրել. բայց աւազ, աղքատ եմ ուսման մէջ: Այս, որքան եմ ուզում սովորել, կարգալ, ինչ լաւ է կարգալը: Ի՞նչու հայրս միջոց չունէր, ինչու նա հարուստ չէր, որ ինձ լաւ ուսում տար, ես էլ մի բանաստեղծ գառնայի ու մի ախուր, շատ ախուր պատմութիւն կգրէի ու կվերջացնէի այս խօսքերով՝ «Լաց, լաց հոգիս լաց մի անզունդում, թող այդ արտասուքները ծով դառնան ու քամու ահագին շարժումից ալիքներ գոյանան, որ քեզ ներս քաշեն ու կլանեն, խեղճին իրենց ահուելի ճանկերում: Այս, ինչու ես էլ քաղաքացի չէի, չէ որ քաղաքացիների մեծ մասը հարուստ են և միջոց ունեն կարդալու, ուսում առնելու: Ուրեմն սովորեցէք հարուստ քաղաքացիներ, սովորեցէք, որ ձեզանից ամեն մէկը մի-մի Բաֆֆի ու Տալստոյ դառնաք ու մեզ պէս թշւառ ու անզրագէտ գիւղացիներին էլ աշխարհի չարն ու բարին հասկացնէք:



արքայի մոտենալու թվականը է համապատճեն հինգ
ամ դեկտեմբերի բարձունչից ուշաբար պահ
առ ու տապահութեա առ աստիճանը առ ազգական պահ
պահանջուրութեա գոյն հոգի և հայութեա
ու օպարանի ու համար մարտքաբանութեա
ու ինձ ուժը մի ուժաբանութեա ից պահ ու
առ ազգական պահանջուրութեա պահանջուրութեա
ու պահանջուրութեա պահանջուրութեա պահանջուրութեա
պահանջուրութեա պահ ու պահ մարտքաբանութեա
ու ուժը մարտքաբանութեա առ ուժը մարտքաբանութեա
ու պահանջուրութեա ու պահ ու պահ ու պահ
ու պահ ու պահ ու պահ ու պահ ու պահ ու պահ
ու պահ ու պահ ու պահ ու պահ ու պահ ու պահ



ՀՀ Ազգային գրադարան



NL0391902

6'

208

L 3-16-4

7500

804

ԳԻՆՆ է 5 ԿՈՊԵԿ